կաթուղիկոս Հայոց Տ․ Կոստանդին Լամբրոնացին, որ իմաստուն և հանճարեղ, և էր թագաւոր Հայոց Պարոն Լեւոն որդի Բրընծի․ սա թագաւորեաց Հայոց ամ մի․ սա վարեցաւ գերի յԵգիպտոս Թագուհեաւ իւրով և որդւով, բայց Թագուհին մարուն եկաւ կեցաւ յԵրուսաղէմ զամս երեք և հանգեաւ ՚ի Քրիստոս, և թաղեցաւ առաջի դրան Ս․ Յակոբայ [1]։

Յաւուրս իշխանութեան Գրիգորի եպիսկոպոսի Եգիպտացւոյ կային տակաւին կանգուն վանորայք ՚ի Լեռնակողմն, ուր բնակէին կրօնաւորք Հայոց, որպէս յայտ առնէ յիշատակարան ձեռագրի միոյ։ «Գրեցաւ սակաւ գիրս ՚ի հռչակաւոր անապատս Լեռնակողմանս, որ յանուն Ս․ Յովհաննու Կարապետին․ ՚ի թուին ՊԼԹ․ (1390) Յուլիս 10, ձեռամբ Ստեփաննոսի, յեպիսկոպոսութեան Ս․ Երուսաղէմի Տէր Գրիգորի Մարգւոյ։ Եւ այլ յիշատակարան, որ առնէ յաթոռակալութեան Հայոց Ս․ Յակոբայ Տէր Գրիգորի և Տէր Մկրտչի հեղի և խոնարհի․ ՊԺԲ․ (1363)։

Եւրոպացի ճանապարհորդք յայցելութեան իւրեանց ՚ի Ս․ Տեղիս, տեսեալ են անդ ՚ի վանս Լեռնակողման բնակեալ ՚ի միաբանացն Հայոց (1418)․ նոյնպէս տեսեալ են նաեւ եւ զՄաչաւանքն ՚ի ձեռս միաբանաց (1384), նախ քան զտիրել Վրաց։ Իսկ յիշատակարանք ձեռագիր մատենից ցուցանեն լինել յառաջագոյն ՚ի Լեռնակողմն 4 վանորայք ՚ի ձեռս Հայոց, որք են Ս․ Կարապետի․ Ս․ Վլիմի․ Ս․ Աստուածածնի, այն է տուն Եղիսաբեթի, զոր Լատինք այցելութեան կոչեն․ և Ս․ Ծննդեան Յովհաննու Կարապետի, զորոց խօսեսցուք յիւրում տեղւոջ։

Մարինոս Լատին գրէ ՚ի Պատմ․ Ս․ Երկրին․ թէ Լատինք մտին ՚ի Ս․ Աստուածածին կոնդակաւ Իննովկենտիոսի Զ․ Պապին Հռոմայ (1392)։

Ի ժամանակս Սարգսի Սրբ եպիսկոպոսի ազգն Վրաց

---

(1) Իսկ Հ․ Ղ․ Ալիշան․ յայլ գիրս Սիս․ 544․ գրէ ընդ նմին գերեալ և Մարեմայ դշխոյի (կնոջ Բ․ Կոստանդեայ) և արձակեալ երթայ յԵրուսաղէմ, և անդ վախճանի։ Իսկ միւսն Մարիամ կին Լեւոնի մեռանի ՚ի Գահիրէ Եգիպտոսի։ Տարբերութիւնք ոչ սակաւ երեւին ՚ի գրուածս և ՚ի թուականս։